ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թվականի N 1816-Ն

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀՈՒՆԸ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԻՑ, ՋՐԱԲԵՐՈՒԿՆԵՐԻՑ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՀՈՍՔԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՑ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել ջրային ռեսուրսի հունը կենցաղային աղբից, ջրաբերուկներից և բնական հոսքը խոչընդոտող այլ օբյեկտներից մաքրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ջրային ռեսուրսի հունի մաքրման աշխատանքների համակարգման լիազոր մարմին նշանակել շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնին (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարներին, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեների նախագահներին, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին՝ միջգերատեսչական համագործակցության շրջանակներում գետերի

հունների մաքրման աշխատանքների իրականացման գործընթացում լիազոր մարմնին ցուցաբերել գործնական, տեղեկատվական և մեթոդական աջակցություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

12.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ